ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2024, հ. 77, N 1-2, 96-98
Известия НАН РА Науки о Земле, 2024, т. 77, N 1-2, 96-98
Proceedings NAS RA, Earth Sciences, 2024, v. 77, N 1-2, 96-98

ԹԻՎ 1-2 ՀԱՏՈՐ 77 2024

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

DOI: 10.54503/0515-961X-2024.77.1-2-96

ՎԻԼԵՆ ԱՐՇԱՎԻՐԻ ԱՂԱՄԱԼՅԱՆ
(1937–2024)



Հայաստանի երկրաբանական համայնքը ծանր կորուստ կրեց: 2024թ. մայիսին մահացավ ՀՀ ԳԱԱ ԵԳԻ երկարամյա գիտաշխատող, ականավոր երկրաբան Վիլեն Արշավիրի Աղամալյանը:

Վ.Ա. Աղամալյանը ծնվել է 1937թ. հունվարի 21-ին Երևանում, ծառայողի ընտանիքում: 1955 թ. ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական միջնակարգ դպրոցը և նույն թվականին ընդունվել Մոլոտովի անվան Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը, որն էլ ավարտել է 1959թ.: 1960 թ. մինչ իր կյանքի վերջին օրերն անընդմեջ աշխատել է ՀԽՍՀ ԳԱ, իսկ հետագայում՝ ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող, ապա՝ ավագ գիտաշխատող, այնուհետև՝ պետրոգրաֆիայի բաժնի առաջատար գիտաշխատող:

1970թ. Մոսկվայի պետհամալսարանի երկրաբանական ֆակուլտետի գիտական խորհրդում հանրահայտ երկրաբան պրոֆեսոր Ե.Ա. Կուզնեցովի գիտական ղեկավարությամբ պաշտպանել է «Արզաքանի մասիվի մինչքեմբրյան բյուրեղային հիմքի թերթաքարային համալիրի երկրաբանությունը և պետրոլոգիան» թեմայով թեկնածուական ատենախոսությունը՝ ստանալով երկրաբանամիներալոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Այս աշխատությունում առաջին անգամ Հայաստանի տարածքի համար առանձնացվել են պրոտերոզոյի հասակի մի շարք շերտախմբեր, և ապացուցվել է, որ այնտեղ առկա ամֆիբոլիտային ֆացիաները ռետրոգրադ փոխակերպման հետևանքով վեր են ածվել կանաչքարային դիաֆտորիտների: Իր ամբողջ գիտական գործունեությունը պրպտող գիտնականը նվիրել է Հայաստանի տարածքի մինչքեմբրյան և մեզոզոյան ժամանակահատվածների երկրաբա-

նական կառուցվածքին առնչվող բարդ և խրթին բազմաբնույթ խնդիրների լուծման հարցերին:

Առանձնապես խոշոր է նրա ավանդը մագմատիզմի, մինեռալոգիայի, պետրոգրաֆիայի, պետրոքիմիայի, իզոտոպային թվագրության, ռեգիոնալ երկրաբանության, երկրաբանական քարտեզագրության, շերտագրության, ինչպես նաև պլիտոտեկտոնիկայի ասպարեզում: Մասնավորապես, գիտնականը կազմել է տարբեր մասշտաբների երկրաբանական քարտեզներ՝ ՀԽՍՀ տարածքի մագմատիզմի և մետամորֆիզմի 1:20000 (համահեղինակությամբ), Ստեփանավանի շրջանի երկրաբանականխատեսումային ու Կոտայքի մարզի բյուրեղային հիմքի երկրաբանապետրոգրաֆիական 1:50000, Նյուվադիի շերտախմբի (հարավային Սյունիք) ու Հախումի բյուրեղային զանգվածի (հյուսիսային Հայաստան) 1:25000, ինչպես նաև Ապարանի սերիայի (կենտրոնական Հայաստան) Միրաք-Թուխմանուկի ոսկու հանքավայրի երկրաբանականխատեսումային 1:10000 մասշտաբների քարտեզներ: Մանրամասն ուսումնասիրել է քարտեզագրված տարածքների երկրաբանական ապարների նյութական կազմը և առաջացման պայմանները. ապացուցել է, որ միջինհատիկային օլիվինային գաբրոները համապատասխանում են Մեղրիի պլուտոնի մոնցոնիտային ներժայթուկի ներդրման առաջին փուլին: **Պարզել է, որ Նյուվադի շերտախմբի քվարցիտային առաջացումները իրականում փոխակերպված ռիոլիտներ են:** Պարզաբանել է, որ Մեղրու պլուտոնից անմիջապես հարավ տեղակայված Նյուվադի շերտախմբի մետամորֆային ապարները կոնտակտ-մետամորֆային բնույթի են, այլ ոչ՝ մինչքեմբրյան բյուրեղային զանգվածի ելուստներ, ինչպես ընդունված էր համարել մինչ այդ: Այլ երկրաբանների հետ համատեղ Վայքի վերին կավճի կոնգլոմերատներում Հայաստանի տարածքում առաջին անգամ հայտնաբերել է էգիրինային նորդմարկիտ և տեշենիտ ապարները, իսկ հյուսիսային Հայաստանի վերին յուրայի հասակի նստվածքներից հայտնաբերել է **սպիլիտներ**:

1998թ. անվանի երկրաբանը ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի մասնագիտական խորհրդում փայլուն կերպով պաշտպանեց «Հայաստանի բյուրեղային հիմքը» դոկտորական ատենախոսությունը՝ ստանալով երկրաբանամինեռալոգիական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Առաջին անգամ Հայաստանի, ինչպես նաև ամբողջ կովկասյան տարածաշրջանի մինչքեմբրյան բյուրեղային հիմքի համար առանձնացրել է պրոտերոզոյան հասակի հստակ արտահայտված շերտագրական միավորներ, այն է՝ 2 սերիա՝ Արզականի (միջին պրոտերոզոյ) և Հանքավանի (վերին պրոտերոզոյ), ինչպես նաև 9 շերտախումբ, որոնցից 3-ը՝ միջին պրոտերոզոյի հասակի՝ Բջնու, Սուրբսարգսի, Վանքիձորի, և 6-ը՝ վերինպրոտերոզոյան՝ Բերդիտակի, Հանքավանի, Դալարի, Քասաղի, Գհուկի և Աղվերանի: Այդ շերտախմ-

բերը՝ բացի Գհուկինից, իրենց ուրույն տեղն են զբաղեցրել ՀՀ և ԽՍՀՄ տարբեր շերտագրական բառարաններում և այլ գիտական աշխատանքներում՝ այդ թվում Հ. Սարգսյանի կողմից 2013թ. հրատարակած եռալեզու շերտագրական բառարանում: Հասակային առումով ճշգրտել և վերադասակարգել է Ապարանի շերտախումբը՝ այն վերանվանելով սերիա և նրա մեջ առանձնացնելով հետևյալ շերտախմբերը ավելի հնից դեպի ավելի նորը՝ Սարալանջի, Լուսագյուղի, Թուխմանուկի և Միրաքի: Թվագրել է Ապարանի սերիան միջին-վերին յուրայի ժամանակահատվածով՝ հստակություն մտցնելով նախկինում տիրող բազմակարծության մեջ:

Զգալի ավանդ ունի Հայաստանի օֆիոլիթային գոտու ուսումնասիրության ասպարեզում. առաջինն էր, որ ամբողջ Անդրկովկասի օֆիոլիթային գոտու համար Բազումի հորստի Սառը Աղբյուր տեղամասից հայտնաբերեց գլաուկոֆանային կամ երկնագույն թերթաքարեր՝ թվագրելով դրանք ստորին կոնյակի հասակով: Բացի այդ, ճշգրտել է մեզոզոյի օֆիոլիթային համալիրի ապարների պետրոգրաֆիական նոմենկլատուրան: Վերջին տարիներին գիտնականը զբաղվում էր ՀՀ տարածքի երկրակեղևի առաջացման մոբիլիստական մոդելի մշակման հարցերով, որի հիման վրա նորովի առանձնացրել է ՀՀ տարածքի հիմնական տեկտոնական միավորները: Հեղինակ և համահեղինակ էր 100-ից ավելի գիտական աշխատությունների՝ այդ թվում 10 մենագրության և 13 ձեռագիր հաշվետվության:

Անվանի գիտնականի հիշատակը վառ կմնա այն գիտնականների մոտ, ում բախտ է վիճակվել նրա հետ աշխատել, իսկ անուրանալի գիտական վաստակը բարձր ուղենիշ է այս և գալիք սերնդի երկրաբանների համար:

Հայկ Մելիք-Ադամյան